# «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

----------------------------------------------------------------------------------------------------

***Հոդված* 1.** «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրա-պետության 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ` Օրենք)  10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

<8) ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության համաձայն հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար>:

***Հոդված* 2**. Օրենքի 11-րդ հոդվածի`

1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

<4) հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար` համաձայն ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության>.

2) 2-րդ մասը <Ապաստանի> բառից առաջ լրացնել հետևյալ բովանդակու-թյամբ նոր նախադասությունով.

<Ապաստանի տրամադրումը մերժվում է, եթե ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության համաձայն ապաստան հայցողը հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար>:

**Հոդված 3.** Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

**Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց բնակարան-ներ վարձակալելու համար տրամադրվում է փոխհատուցում` Հայաստանի Հանրա-պետության կառավարության սահմանած կարգով>:**

**Հոդված 4.** Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել <<Հայաստանի Հանրապետություն անօրինական մուտք գործած> բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում փոխարինել <երկամսյա ժամկետում> բառերով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: